

**ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԱՇՇՈՒՐ-ՔԱՆԵՇ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՌԵՎՏՐՈՒՄ***

ՌՈՐԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Քանալի բառեր՝ Քանեշ, Աշշուր, կին, ընտանիք, միջազգային առևտուր, բուրդ, նամակներ, Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ:

Աշշուրցի առևտրականները մ.թ.ա. 20-18-րդ դդ. Փոքր Ասիայի արևելքում, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և Ասորիքի հյուսիսում՝ մոտ քառասուն քաղաքներում, հիմնադրել էին առևտրական կայաններ, որոնք տվյալ քաղաքներում նրանց առևտրային գործունեության կենտրոններն էին: Միջազգային առևտրական ցանցի հանգուցակետը և գլխավոր քաղաքն էր Քանեշը կամ Նեսան՝ հետագայում խեթական պետության մեզ հայտնի երկրորդ մայրաքաղաքը:

Սովորաբար աշշուրցի վաճառականները հիմնավորվում էին փոքրասիական քաղաքներում՝ գնելով այնտեղ տներ, կազմելով ընտանիքներ: Նրանց տներում էին պահվում նաև նրանց առևտրական արխիվները: Այդ առևտրականները նաև մշտական նամակագրական կապի մեջ էին իրենց հայրենի քաղաքի՝ Աշշուրի հետ: Հիմնականում դրանք փաստաթղթեր էին, որոնք վերաբերում էին նրանց առևտրային գործունեությանը: Հա-

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2020: Գրախոսվել է 08.08.2020:
Հոդվածի թեման որպես զեկուցում հեղինակի կողմից ներկայացվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կազմակերպված «Կանայք Արևելքում» խորագրով գիտաժողովում (2019 թ. դեկտեմբերի 15-ին):

ճախ այդ նամակներն ունեին անձնական, նեղ ընտանեկան բնույթ, և դրանց շնորհիվ մենք տեղեկանում ենք նաև այդ ժամանակաշրջանի ընտանեկան հարաբերությունների, անձնային կապերի և այլնի մասին: Այդ առևտրատնտեսական հարաբերություններում կարևոր դերակատարում են ունեցել նաև կանայք:

Աշուր-Քանեշ¹ միջազգային առևտուրն իրականացվում էր Աշուր քաղաք-պետության և փոքրասիական քաղաք-պետությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Պայմանագրերը, փաստորեն, աշուրցի առևտրականների առջև բաց էին արել Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի շուկաները²: Սա աշուրցիների խաղաղ ներթափանցումն էր տարածաշրջան:

Աշուրցի առևտրականները կարողանում էին տեղի կառավարիչներից և արքաներից ստանալ այնպիսի իրավունքներ, որոնք նրանց թույլ էին տալիս բնակավայրերում հաստատվելուց հետո այնտեղ գործել իրենց առանձին օրենքներով և վարել անկախ ֆինանսական գործունեություն: Ըստ էության, առևտրային գաղութներում գործում էին աշուրյան օրենքները: Աշուրցի առևտրականներն օգտագործում էին իրենց հաշվարկի

¹ Քանեշի կարումի տարածքից կամ Քյուլթեփե հնավայրից (հայ. Ջրգորթ) է գտնվել, այսպես կոչված, կապադոկյան (գերադասելի է դրանք անվանել *քանեշյան*) աղյուսակների մեծագույն մասը (մոտ 23.000, սակայն Անկարայի Անատոլիական քաղաքակրթության թանգարանի հազարավոր տեքստեր դեռ սպասում են հրատարակման), (տե՛ս Michel 2003):

² Բացի Փոքր Ասիայի արևելյան, կենտրոնական և հարավային շրջաններից, առևտուրն ընդգրկել էր նաև թերակղզու արևմտյան մասը, տե՛ս Şahoğlu 2005: 339-361:

միավորները, իրենց լեզուն, պաշտում էին իրենց աստվածություններին և իրենց ներքին հարցերը նույնպես կարգավորում էին աշուրյան օրենքներով: Քանեչի աշուրցի առևտրականներն ունեին նաև իրենց ավագների խորհուրդը:

Տեքստերում քիչ են տրված տեղացի քանեչցի առևտրականների անուններ³: Սակայն սա չի նշանակում, որ նրանք ներգրավված չեն եղել առևտրային գործունեության մեջ: Օրինակ, աշուրցի առևտրականների տեքստերում շատ քիչ տեղեկություն կա աղի, ստրուկների, զենքի վաճառքի մասին. փաստ, որը կարող է վկայել այն մասին, որ այդ ապրանքների առևտրով զբաղվել են հիմնականում ոչ աշուրցի առևտրականները:

Աշուրցիները տեղացիներին անվանում էին *nu'ā'um* (տեղացի), իսկ տեղացիները նրանց անվանում էին *tam-kārum* (առևտրական, վաճառական, պարզապես աշուրցի): Նրանք վարչական և իրավական առումով անկախ էին և առնչվում էին Քանեչի իշխանությունների հետ իրենց կարումի (աշուրցիների հիմնած առևտրային գաղութը, բառացի՝ հանգրվան) ներկայացուցիչների միջոցով: Նրանց պարտականություններն ու իրավունքներն ամրագրվում էին երկկողմ պայմանագրերում, որտեղ ամրագրվում էին նաև տեղական իշխանությունների պարտականությունները: Աշուրցի առևտրականները պարտավոր էին վճարել առևտրական հարկեր, իսկ տեղական իշխանությունները պարտավոր էին ապահո-

³ Քանեչյան տեքստերում կան ասորաբաբելոնական, արևմտասեմական, խաթական, խեթական, խուրիական անձնանուններ (Orlin 1970; Wilhelm 2008: 181-194; Иванов 2008: 9-29):

վել նրանց և նրանց ապրանքների անվտանգությունն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում⁴:

Աշշուրցիները հիմնականում արտահանում էին արհեստագործական պատրաստի արտադրանք՝ գործվածքներ, հագուստ, կահկարասի: Սակայն Աշշուր-Քանեշ առևտուրը հիմնականում հենվում էր երկու ապրանքների՝ անագի և բրդե գործվածքների վրա: Աշշուրցիներն այս ապրանքների մի մասը ձեռք էին բերում Բաբելոնիայում և արտահանում Փոքր Ասիա⁵:

Ապրանքը քաղաք տեղ հասնելուն պես գնահատվում էր պալատում և կարող էր վաճառվել միայն դրանից հետո: Աշշուրի առևտրականները, բացի միջազգային առևտրից, ներքաշված էին նաև տեղական առևտրային գործունեության մեջ:

Քանեշյան աղբյուրները, տարատեսակ տեղեկատվությունից բացի, տեղեկություններ են պարունակում նաև Աշշուր-Քանեշ միջազգային առևտրում կանանց դերի և ներգրավվածության վերաբերյալ:

Նշենք, որ Աշշուրում մնացած աշշուրցի առևտրականների կանանց ուսերին էին մնում տան և ընտանիքի հոգսերը: Սակայն նրանց Քանեշ և այլ փոքրասիական քաղաքներ ուղարկած նամակներից պարզ է դառնում, որ նրանք կարող էին հանդիսանալ իրենց տան սեփականատերը և հանդես գալ նաև որպես առևտրային գործունեության անմիջական մասնակիցներ:

Քանեշում և այլ քաղաքներում, որտեղ հաստատվում կամ առևտուր էին անում աշշուրցիները, նրանք սովորաբար ամուսնանում էին տեղացի կանանց հետ: Սակայն

⁴ Orlin 1970: 74-75; Michel 2014a: 69-73.

⁵ Barjamovic 2011: 9.

կար երկու պայման. նրանք չէին կարող միաժամանակ ունենալ երկու կին միևնույն կարգավիճակով (աքք.՝ *aššutum* «գլխավոր կին, ամուսնացած կին», աքք.՝ *amtum* «երկրորդ կին, ծառա») և ապրեին միևնույն հարկի տակ: Բացի դրանից, աշշուրցի վաճառականները չէին կարող ունենալ մեկից ավելի կին նույն բնակավայրում⁶: Պատահում էր նաև այնպես, որ աշշուրցի այրի կանայք էին ամուսնանում փոքրասիացի տղամարդկանց հետ և տեղափոխվում ապրելու իրենց ամուսինների բնակավայրերը⁷:

Սովորաբար աշշուրցի վաճառականներն ունեին երկու կին՝ մեկը Քանեշում կամ մեկ այլ քաղաքում, մյուսը՝ Աշշուրում⁸: Ե՛վ փոքրասիացի, և՛ աշշուրցի կանայք կարող էին հավասարապես լինել և՛ առաջին, և՛ երկրորդ կնոջ կարգավիճակում, այսինքն՝ պարտադիր չէր, որ միայն աշշուրցի կինը լիներ գլխավորը: Հաճախ էր պատահում նաև, որ աշշուրցի կնոջ որդին էր դառնում հոր գործի շարունակողը, այլ ոչ թե փոքրասիացի կնոջ որդին⁹: Սակայն կան նաև օրինակներ, երբ աշշուրցի առևտրականի գործի շարունակող էր դառնում նաև նրա դուստրը, որը ծնվել էր խառնամուսնությունից¹⁰:

⁶ Veenhof, Eidem 2008: 109.

⁷ Michel 2014b: 128.

⁸ Barjamovic, Hertel, Larsen 2012: 62-63.

⁹ Lumsden 2008: 39.

¹⁰ Այդպիսի մի օրինակ է Խաթթիթում անունով կնոջ պատմությունը: Նրա հայրն աշշուրցի առևտրական էր, իսկ մայրը քանեշցի էր: Այդ կինն ամուսնացած էր աշշուրցի առևտրականի հետ և նույնպես ներգրավված էր առևտրային գործունեության մեջ: Նա գործնական նամակներ էր փոխանակում աշշուրցի և քանեշցի վաճառականների հետ: Այս ամենը խոսում է նաև այն մասին, որ Խաթթիթումը, ինչպես և միջազգային առևտրում ներգրավված վաճառականների մեծ մասը,

Սովորաբար, երբ աշշուրցի վաճառականները տարի-քի բերումով այլևս չէին զբաղվում գործարարությամբ, վերադառնում էին Աշշուրում գտնվող իրենց կանանց մոտ՝ լքելով քանեշցի կանանց: Գործերից հեռանալու դեպքում աշշուրցի առևտրականները հիմնականում բաժանվում էին իրենց քանեշցի կանանցից և ամուսնական պայմանագրի համաձայն՝ կանանց և իրենց համատեղ երեխաներին թողնում Քանեշի իրենց տունը և ունեցվածքը և վճարում նաև փոխհատուցում:

Հետաքրքիր է, որ երբեմն աշշուրցի կանայք բողոքում էին իրենց ամուսիններին, որ Աշշուրում կյանքը նրանց հեռանալուց հետո դժվարացել է, և իրենք խնդիրների առջև են կանգնել: Կանայք կոչ էին անում իրենց ամուսիններին լքել փոքրասիացի կանանց և վերադառնալ Աշշուր¹¹:

Երբեմն աշշուրցի կանայք իրենց ամուսինների հետ տեղափոխվում էին Քանեշ և ամբողջ ընտանիքով հաստատվում այնտեղ: Որոշ դեպքերում աշշուրցի առևտրականների այրի կանայք, որոնք ապրում էին Քանեշում, կրկին ամուսնանում էին տեղացիների հետ¹²:

«Քանեշյան» փաստաթղթերում կանայք հանդես էին գալիս նաև որպես տան, անշարժ գույքի սեփականա-

տիրապետում էր առնվազն երկու լեզվի՝ աքքադերենի և նեսիերենի: Տե՛ս Yazicioğlu Santamaria 2015: 209.

¹¹ Barjamovic, Hertel, Larsen 2012: 62-63.

¹² Orlin 1970: 79; Michel 2014a: 69-84. Այդպիսի մի օրինակ է աշշուրցի վաճառական *Šalim-Aššur*-ի դուստր *Sāt-Anna*-ն: Նա ամուսնացած էր փոքրասիացի *Šuppīnuma*-ի հետ և ակտիվորեն մասնակցում էր միջազգային առևտրին՝ անձամբ զույգեր ներդնելով քարավանային առևտրում: Առևտրային գործունեության մեջ նա օգտագործում էր իր անձնական կնիքը: Տե՛ս Larsen, Lassen 2014: 178, 187.

տերեր: Եվ դա վերաբերում է ոչ միայն աշուրցի, այլ նաև քանեշցի կանանց: Կանայք նաև հանդես էին գալիս և՛ որպես անշարժ գույքի գնորդներ, և՛ որպես վաճառողներ: Բացի այդ, նրանք կարող էին ժառանգել անշարժ գույքը: Աշուրցի վաճառականները հաճախ Աշուրում կամ Քանեշում իրենց տները ժառանգություն էին թողնում իրենց կանանց: Օրինակ, պահպանվել է ժառանգության ձևակերպման մի փաստաթուղթ, որով եղբայրն իր տունը (Քանեշում) ժառանգում է քրոջը, քանի որ ինքը ժառանգներ չունի¹³:

Աշուրցի վաճառականների մոտ ընդունված էր նաև կտակներում նշել իրենց կանանց և չամուսնացած դուստրերի անունները, որոնց նույնպես ժառանգություն էր հասնում, երբեմն անշարժ գույքի տեսքով: Ամուսնացած դուստրը համարվում էր իր ամուսնու ընտանիքի (*bētum*) անդամ, և նրա անունը կտակում չէր նշվում¹⁴:

Քանեշյան ամուսնական պայմանագրերի համաձայն՝ ամուսինները հավասար իրավունքներ ունեին անշարժ գույքի նկատմամբ: Ամուսնալուծության դեպքում նրանք հավասարապես բաժանում էին անշարժ գույքը: Այսինքն՝ այստեղ կարելի է տեսնել ներկայումս, հատկապես Արևմուտքում ընդունված ամուսնական պայմանագրերի նախատիպերը¹⁵: Ամուսնական պայմանագրերը հստակեցնում էին այն պայմանները, որոնցով պետք է տեղի ունենային ամուսնալուծությունը և շարժական ու անշարժ գույքի բաժանումը: Որոշ ամուսնական պայմանագրեր նախատեսում էին նաև տուգանքներ ամուսնալուծության դեպքում: Ամուսնական պայմանագրերում

¹³ Michel 2016a: 89.

¹⁴ Michel 2013.

¹⁵ Michel 2016a: 91.

տեղեկություններ կան նաև այն մասին, որ ամուսինն իրավունք ուներ ամուսնանալու մեկ այլ կնոջ հետ, եթե առաջին կինը երկու կամ երեք տարվա ընթացքում երեխա չունենար: Պահպանվել են նաև ամուսնալուծության վերաբերյալ բազմաթիվ պայմանագրեր, որտեղ հստակեցվում է, թե ում հետ պետք է ապրեն երեխաները, և ինչ ունեցվածք պետք է թողնի կնոջը Աշշուր վերադարձող վաճառականը¹⁶:

Որպես կանոն, մ.թ.ա. 20-18-րդ դդ. աշշուրցի կինն ուներ իր իրավասության ներքո գտնվող սեփականություն: Նա շատ դեպքերում անկախ էր իր ամուսնուց և, իհարկե, իր օժիտի սեփականատերն էր: Աշշուրցի կանայք մասնակցում էին նաև Աշշուր-Քանեշ միջազգային առևտրային գործունեությանը:

Հատկապես կարևոր էր կանանց ներգրավվածությունը տեքստիլ առևտրի բնագավառում: Աշշուրցի կանանց կողմից Քանեշ ուղարկված բազմաթիվ նամակների շնորհիվ մենք պատկերացում ենք կազմում Աշշուրում տեքստիլ արտադրության և վաճառքի մասին: Աշշուրցի կանայք բավականին մեծ շահույթ էին ստանում այդ առևտրից:

Քանեշի աղբյուրները թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել բրդե ապրանքների արտադրության գործընթացի մասին՝ սկսած բրդի գնումից մինչև բրդե գործվածքների, կտորների արտադրությունը և վաճառքը: Կանայք այս գործընթացներում լիարժեք գործարար-առևտրականների համբավ ունեին¹⁷:

¹⁶ Michel 2010b: 124-125; Michel 2017: 84-87.

¹⁷ Lassen 2014: 255-263.

Բուրդը (աքք.՝ *šāptum*) հիմնականում ձեռք էր բերվում կա՛մ Աշշուրի շուկայում, կա՛մ քաղաքային դարպասների մոտ: *Kutānum* բրդե կտորներն ամենատարածված արտահանվող ապրանքատեսակն էին¹⁸: Հաշվի առնելով այդ կտորների մեծածավալ առևտուրը՝ աշշուրցի կանայք բավականին մեծ եկամուտներ էին ստանում: Քանեշում և այլ փոքրասիական բնակավայրերում տեղացի կանայք արտադրում էին հիմնականում բրդե *pirikannum* կամ *parakunnum* կտորները¹⁹, որոնք նույնպես լայն տարածում ունեին, և որոնց առևտրում ներգրավված էին նաև աշշուրցի առևտրականները²⁰:

Կանանց կողմից ուղարկված նամակներում երբեմն նշվում էր բրդի պակասի մասին: Արտադրական ծավալներն այնքան մեծ էին, որ հումքը երբեմն չէր բավարարում կամ թանկանում էր: Նամակներում պահպանվել են տեղեկություններ, որտեղ աշշուրցի կանայք խնդրում են իրենց հարազատներին Քանեշից կամ մոտակա այլ վայրերից Աշշուր բուրդ ուղարկել: Երբեմն աշշուրցի վաճառականները բրդյա ապրանքների արտադրություն էին կազմակերպում նաև Քանեշում: Փոքր Ասիայում աշ-

¹⁸ Այդ կտորի չափսը 4x4.5 մ էր, իսկ քաշը՝ 2.5 կգ: Քանեշում այն վաճառվում էր 15 սիկղով (1 սիկղը միջինը հավասար էր մոտ 8.3 գ. արծաթի): Հանելով հարկերը՝ աշշուրցի կանայք կարող էին ստանալ 10-12 սիկղ եկամուտ: Աշշուրում մեկ արծաթ սիկղով ձեռք բերված բրդով կարելի էր այդպիսի երկու կտոր արտադրել: Տե՛ս Larsen 1967: 152; Lassen 2010: 174; Barjamovic 2011: 12-13; Lassen 2014: 257:

¹⁹ Բացի *pirikannum* կտորներից՝ տարածված էին նաև փոքրասիական ծագում ունեցող *sapdinnum*, *uisābum* կտորները: Բրդե կտորների առևտրի, տեսակների, անվանումների, չափսերի, որակի վերաբերյալ առավել ամբողջական տե՛ս Michel, Veenhof 2010: 210-271:

²⁰ Lassen 2014: 261.

շուրջի վաճառականներից հաճախ որպես հարկ վերցնում էին բրդե արտադրանքը²¹:

Աշշուրյան ընտանիքներում ջուլիակագործությունը կանանց հիմնական զբաղմունքներից մեկն էր, որն անմիջականորեն կապված էր միջազգային առևտրի հետ: Կանանց կողմից ուղարկված նամակներում տեղեկություններ կան նաև այդ ապրանքների որակի, չափերի և այլ նրբությունների վերաբերյալ: Սովորաբար, եթե ապրանքը տեղ էր հասնում ոչ մաքսանենգ ճանապարհով, իսկ այդպիսի դեպքեր շատ կային, ապա այն հարկվում էր: Հարկվում էր նաև այն արծաթը, որ, օրինակ, աշշուրցի վաճառականն ուղարկում էր Աշշուր՝ իր կնոջը: Աշշուրցի կանայք, ուղարկելով ապրանքը, նախօրոք պայմանագիր էին կնքում այն վաճառականների կամ ճանապարհորդների հետ, որոնք հանձն էին առնում տեղափոխել այդ ապրանքները: Քանեշում այն վաճառվում էր կա՛մ այդ կանանց ամուսինների, կա՛մ նրանց բարեկամների կողմից:

Աշշուրցի վաճառականները, բացի այն գումարից, որ իրենք պետք է ուղարկեին իրենց աշշուրցի կանանց ապրանքի դիմաց, ուղարկում էին նաև գումար՝ ընտանիքի ծախսերը հոգալու համար: Այդ ամենի վերաբերյալ նույնպես կան նամակներ, որտեղ, բնականաբար, նշված էր նաև գումարի չափը: Այդ գումարի մի մասը աշշուրցի կանայք դարձյալ ներդնում էին արտադրության մեջ: Սակայն պահպանվել են նաև նամակներ, որտեղ աշշուրցի կանայք բողոքում են, որ ամուսինները լքել են իրենց և գումար չեն ուղարկում²²:

²¹ Lassen 2010: 174; Lassen 2014: 261-262.

²² Dercksen 2014: 97; Alexander, Violet 2018: 8.

Աշշուրցի կանանց արտադրանքը բարձր էր գնահատվում Քանեշում, և պահպանված նամակագրությունից մենք պատկերացում ենք կազմում նաև, որ աշշուրցի առևտրականների խորհուրդների հիման վրա կանայք ավելի էին բարելավում իրենց արտադրած բրդե ապրանքների որակը՝ համապատասխանեցնելով այն փոքրասիական շուկայի պահանջներին²³: Որոշ աշշուրցի կանայք, բացի բրդե ապրանքներից, Աշշուրում գնում էին նաև այլ ապրանքներ և ուղարկում Քանեշ կամ այլ փոքրասիական քաղաքներ՝ վաճառքի համար:

Շատ կարևոր է արձանագրել, որ ուղարկված կամ ստացված նամակների զգալի մասի հեղինակները կանայք էին, որը խոսում է նաև նրանց գրագետ լինելու և համապատասխան կրթություն ունենալու մասին²⁴: Այդ պատճառով հաճախադեպ էր նամակագրությունը նաև կանանց միջև: Որոշ դեպքերում նրանք ունեին իրենց սեփական կնիքները, որոնցով կնքում էին նամակները²⁵:

«Քանեշյան» աղբյուրները բազմաթիվ տեղեկություններ են պարունակում նաև աշշուրցի կանանց մասին, որոնք բավականին ազատություններ ունեին և՛ կենցաղում, և՛ ձեռնարկատիրության ոլորտում: Ավելորդ չէ հիշատակել, որ այս դեպքում նկատի ունենք ամուսնացած և երեխաներ ունեցող կանանց, որոնց կարգավիճակն

²³ Michel 2008: 75.

²⁴ Այնուամենայնիվ, կանայք շատ հաճախ չէին ընկալվում որպես առևտրային գործունեության լիարժեք մասնակիցներ, գործընկերներ: Նրանք դիտարկվում էին որպես իրենց ամուսինների, հայրերի առևտրային գործունեության գործընկերներ, մասնակիցներ: Stü An-derson 2017: 85:

²⁵ Michel 2010a: 87; Barjamovic 2015: 62.

ավելի բարձր էր, քան չամուսնացած կամ երեխա չունեցող կանանց կարգավիճակը:

Հետաքրքիր է, որ պարտքերի վերաբերյալ աղյուսակներից պարզ է դառնում, որ կանայք իրավունք ունեին պարտք տալու նաև այլ կանանց, տղամարդկանց՝ աշուրի կամ քանեշի, կամ հանդես գալու որպես պարտքի երաշխավոր²⁶:

Պետք է փաստել նաև, որ աշուրի առևտրականների ստեղծած համատեղ առևտրային ընկերության բաժնետերերի շարքում հիշատակվել են նաև կանայք:

Ինչպես վերևում նշեցինք, Քանեշում աշուրի տղամարդ վաճառականների հայտնվելն ունեցավ նաև այլ հետևանքներ. աշուրիները սկսեցին ամուսնանալ տեղացի կանանց հետ: Ի տարբերություն աշուրի կանանց, որոնք հիմնականում կենտրոնացել էին բրդե կտորեղենի արտադրության և վաճառքի վրա, քանեշի կանայք ավելի շատ ներգրավված էին անասնապահության, գյուղատնտեսական²⁷ ապրանքների արտադրության և վաճառքի մեջ²⁸:

Ի դեպ, այս առևտրային գործունեությունն այլ առևտրական ուղղություններով շարունակվել է նաև միջինասորեստանյան փուլում, իսկ ասորեստանյան հասարակության մեջ կանանց ակտիվ ներգրավվածությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ տեսնում ենք նաև հետագայում, օրինակ՝ նորասորեստանյան ժամանակաշրջանում:

²⁶ Michel 2013.

²⁷ Քանեշում և շրջակայքում գյուղատնտեսական գործունեության վերաբերյալ տե՛ս Derksen 2008.

²⁸ Michel 2010b: 131; Michel 2016b: 203-204.

Այսպիսով, մենք կարող ենք արձանագրել, որ, չնայած որոշակի դժվարություններին, աշուրացի կանայք բավականին ակտիվ էին ներգրավված Աշուր-Քանեշ միջազգային առևտրում: Բացի իրենց առօրյա պարտականություններից՝ երեխաների դաստիարակություն, ծնողների խնամք, տան հոգսեր, որոնք ներառում էին նաև տնային ծառաների աշխատանքի կազմակերպումը և այլն, կանայք նաև ցուցաբերում էին իսկական առևտրական և ֆինանսական ջիղ: Քանեշյան աղբյուրները տեղեկություններ են տալիս գործունյա, հաջողակ և ձեռներեց կանանց մասին, որոնք իրենց մասնակցությունն էին բերում Աշուր-Քանեշ միջազգային առևտրի բոլոր ուղղություններում: Սկսած ապրանքի արտադրությունից մինչև ապրանքների իրացման գործընթաց՝ կանայք ամենակարևոր դերակատարներից են եղել և իրենց էական ներդրումն են ունեցել Աշուր-Քանեշ միջազգային առևտրում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Иванов В.В. 2008**, Анатолийские личные имена и слова в староассирийских текстах XX-XVIII вв. до н.э. - Древнейшие свидетельства об индоевропейских языках, Вопросы языкознания, 2, с. 3-29.
- Alexander W.M., Violet W. 2018**, Trade from Assyrian Aššur to Anatolian Kaneš in the 19th Century B.C.E., Journal of Management and Marketing Research, vol. 22, pp. 1-26.
- Anderson G.A. 2017**, The Old Assyrian Social Network: an analysis of the texts from Kültepe-Kanesh (1950-1750 B.C.E.). A Dissertation presented by Adam Grant Anderson to the Department of Near Eastern Languages and Civilizations in partial Fulfillment of the Requirements for the Degree of Doctor of Philosophy in the Subject of Near Eastern Languages and Civilizations. Harvard University Cambridge, Massachusetts, August 2017, 282p.
- Barjamovic G. 2011**, A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period. Copenhagen, 519p.

- Barjamovic G. 2015**, Contextualizing Tradition. Magic, Literacy and Domestic Life in Old Assyrian Kanesh. In P. Delnero and J. Lauinger (eds.), *Texts and Contexts: The Circulation of Cuneiform Texts in Social Space*. SANER. Boston: De Gruyter, pp. 48-86.
- Barjamovic G., Hertel T., Larsen M. T. 2012**, Ups and Downs at Kanesh. *Chronology, History and Society in the Old Assyrian Period*, PIHANS. Uitgaven van het Nederlands Instituut voor het Nabije Oosten te Leiden, 161p.
- Dercksen J.G. 2008**, Observations on land use and agriculture in Kaneš, *Old Assyrian Studies in Memory of Paul Garelli (OAAS 4, PIHANS 112)*, pp. 139-157.
- Dercksen J.G. 2014**, The Old Assyrian Trade and its Participants, *Documentary Sources in Ancient Near Eastern and Greco-Roman Economic History: Methodology and Practice* (ed. by H.D. Baker, M. Jursa), pp. 59-112.
- Larsen M.T. 1967**, Old Assyrian caravan procedures, *Istanbul, PIHANS*, XXII, 188p.
- Larsen M.T., Lassen A.W. 2014**, Cultural Exchange at Kültepe. Extraction&control. *Studies in Honor of Matthew W. Stolper. Studies in Ancient Oriental Civilization. Volume 68*, Chicago, pp. 171-188.
- Lassen A.W. 2010**, The Trade in Wool in Old Assyrian Anatolia, *Jaarbericht "Ex Oriente Lux"*, 42, pp. 159-179.
- Lassen A.W. 2014**, Wool in Anatolia in the Old Assyrian Period. *Wool Economy in the Ancient Near East and the Aegean. From the Beginnings of Sheep Husbandry to Institutional Textile Industry*, pp. 255-263.
- Lumsden S. 2008**, Material Culture and the Middle Ground in the Old Assyrian Colony Period, in *Old Assyrian Studies in Memory of Paul Garelli (Old Assyrian Archives, Studies, Volume 4)*, ed. By C. Michel, Nederlands Instituut voor het Nabije Oosten, pp. 21-43.
- Michel C. 2003**, Old Assyrian Bibliography of Cuneiform Texts, Bullae, Seals and the Results of the Excavations at Aššur, Kültepe/Kaniš, Acemhöyük, Alişar and Boğazköy. *Publications de l'Institut Historique et Archéologique Néerlandais de Stamboul (PIHANS) 97. Old Assyrian Archives. Studies (OAAS), vol. 1*, Leiden, 203p.
- Michel C. 2008**, The Old Assyrian Trade in the light of Recent Kültepe Archives, *Journal of the Canadian Society for Mesopotamian Studies*, pp.71-82.

- Michel C. 2010a**, Writing, counting and scribal education in Assur and Kanesh, *in* F. Kulakoğlu & S. Kangal (eds.), *Anatolia's Prologue Kültepe Kanesh Karum. Assyrians in Istanbul*, Istanbul, pp. 82-93.
- Michel C. 2010b**, Women of Aššur and Kaniš, *in* F. Kulakoğlu & S. Kangal (eds.), *Anatolia's Prologue Kültepe Kanesh Karum. Assyrians in Istanbul*, Istanbul, pp. 124-133.
- Michel C. 2013**, Women and Economy in the Family Sphere According to the Old Assyrian Sources: <https://refema.hypotheses.org/50> (úñıııııııı ıııı 27 ħıııııııı 2020 ıııı.)
- Michel C. 2014a**, Considerations on the Assyrian Settlement at Kanesh. Current Research at Kültepe-Kanesh. An Interdisciplinary and Integrative Approach to Trade Networks, Internationalism, and Identity, ASOR, ed. by Levent Atici, Fikri Kulakoğlu, Gojko Barjamovic, and Andrew Fairbairn, pp. 69-84.
- Michel C. 2014b**, Central Anatolia in the Nineteenth and Eighteenth Centuries BC. Constituent, Confederate, and Conquered Space. The Emergence of the Mittani State, pp. 111-136.
- Michel C. 2016a**, Women and Real Estate in the Old Assyrian Texts. *Orient*, The Society for Near Eastern Studies in Japan, Vol. 51, pp. 83-94.
- Michel C. 2016b**, Women Work, Men are Professionals in the Old Assyrian Private Archives. The Role of Women in Work and Society in the Ancient Near East. *Studies in Ancient Near Eastern Records*, Volume 13, Edited by Brigitte Lion and Cécile Michel, pp. 193-208.
- Michel C. 2017**, Economy, Society, and Daily Life in the Old Assyrian Period. A companion to *Assyria*/edited by Eckart Frahm, Yale University, New Haven, US, pp. 80-107.
- Michel C., Veenhof K. 2010**, The Textiles Traded by Assyrians in Anatolia. Textile Terminologies in the Ancient Near East and Mediterranean from the Third to the First Millennia BC. Ed. by C. Michel and M.-L. Nosch. *Ancient Textiles Series*, Vol. 8, Oxford and Oakville, pp. 210-271.
- Orlin L. 1970**, *Assyrian Colonies in Cappadocia*, The Hague-Paris, 272p.
- Şahoğlu V. 2005**, The Anatolian Trade Network and the Izmir Region during the Early Bronze Age. *Oxford Journal of Archaeology*, 24(4), pp. 339-361.

- Veenhof K., Eidem J. 2008**, Mesopotamia: The Old Assyrian Period, *Orbis Biblicus et Orientalis* 160/5, Fribourg/Göttingen, 383p.
- Wilhelm G. 2008**, Hurrians in the Kültepe texts, Anatolia and the Jazira during the Old Assyrian Period. Ed. by J.G. Dercksen, pp. 181-194.
- Yazicioğlu Santamaria G.B. 2015**, The people of Kanesh: Residential mobility, community life, and cultural pluralism in a Bronze Age city in Anatolia, Turkey. A dissertation submitted to the Faculty of the division of the Humanities in candidacy for the degree of Doctor of philosophy. Department of Near Eastern languages and civilizations, Chicago, 591p.

Ռոբերտ Ղազարյան - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտ,
Հին Արևելքի բաժին, առաջատար գիտաշխատող
rghazaryan@orient.sci.am

THE ROLE OF WOMEN IN AŠŠUR-KANEŠ INTERNATIONAL TRADE

Keywords: *Kaneš, Aššur, woman, family, international trade, wool, letters, Asia Minor, Armenian Highland.*

Old Assyrian or Cappadocian texts contain information on the role and involvement of women in Aššur-Kaneš international trade.

It should be noted that the wives of Assyrian traders left behind had to take care of the house and the family. However, letters from them to Kaneš and other cities of Asia Minor reveal that they could be the owner of their house and could act as direct participants in commercial activities as well.

We can state that despite some difficulties, Assyrian women were quite actively involved in Aššur-Kaneš international trade. In addition to their day-to-day responsibilities of raising children, caring for parents, caring for the household, which also

included organizing the work of housekeepers, etc., women also acted as individuals with real commercial and financial abilities. Cappadocian sources provide information on active, successful female entrepreneurs who were involved in all aspects of Aššur-Kaneš international trade. From the production of goods to the process of sales, women were one of the most important players and had a significant contribution to Aššur-Kaneš international trade.

Robert Ghazaryan - *PhD, Institute of Oriental Studies NAS RA,
Department of Ancient Orient, Leading Researcher,
rghazaryan@orient.sci.am*